«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՉԱՓԱԾՈ
	ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ
ԱՌԱՐԿԱ	ՄԱՅՐԵՆԻ
ՀԵՂԻՆԱԿ	ՎԱՐԴՈՒՀԻ ԴԱՎԹՅԱՆ
ՄԱՐԶ	ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԷՊԻԿԱԿԱՆ ԵՎ ՔՆԱՐԱԿԱՆ ՉԱՓԱԾՈ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ..... 6

§1.1 ԷՊԻԱԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 6

§1.2 ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 8

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՉԱՓԱԾՈ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 21

§2.1 ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՉԱՓԱԾՈ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ..... 21

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 34

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 35

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չափածո ստեղծագործությունների ուսուցումը առանցքային և կարևոր նշանակություն ունի I-IV դասարաններում սովորող աշակերտների համար: Այդ երկերը կազմում են ուսուցանվող նյութի գրեթե կեսը: Ուսուցիչը պետք է պատրաստ լինի դասավանդման արդյունավետ ձևերի և միջոցների ընտրությանը՝ չմոռանալով հաշվի առնել սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

Անհերքելի փաստ է, որ չափածո ստեղծագործությունները երեխաների համար ավելի դժվարընկալելի են, քան արձակ երկերը, ուստի հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ուսուցիչը նյութի մատուցման ժամանակ կարող է կիրառել բնագրի կրկնակի ընթերցման, խմբային ընթերցման, դերերով ընթերցման հնարները:

Ուսուցիչը ազատ է ուսուցման ավանդական և ժամանակակից (ինտերակտիվ) մեթոդների ընտրության մեջ: Աչքի առջև ունենալով ուսուցման մեթոդների մի ողջ զինանոց՝ նա կարող է ընտրել դրանցից արդյունավետն ու նպատակայինը:

Դաստիարակչական առումով չափածո ստեղծագործություններն ունեն չափազանց մեծ դեր և նշանակություն: Ցածր դասարաններում չափածոյի ճիշտ և սկզբունքային ավանդումը լավագույն նախապատրաստությունն է բարձր դասարաններում ավելի բարդ չափածո ստեղծագործությունների ընկալման, յուրացման և վերլուծման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.- Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ չափածո ստեղծագործությունների ուսուցումը այսօր էլ նպաստում է կրտսեր դպրոցականների խոսքի զարգացմանը, լեզվական մտածողության հարստացմանը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ.- հաշվի առնելով կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները՝ մեր նպատակն է

հետազոտել և մշակել չափածո ստեղծագործությունների ուսուցման արդյունավետ ձևեր, առաջարկել ուսուցման արդյունավետ և նպատակային մեթոդներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.- Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

1. Հետազոտել ցածր դասարաններում «Մայրենի» դասագրքերում չափածո ստեղծագործությունները.
2. Պարզել ուսուցման ժամանակ սովորողների առջև ծառացող խնդիրները.
3. Առաջարկել ուսուցման արդյունավետ մեթոդներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ.- Մենք առաջնորդվել ենք տեքստերի վերլուծության, համադրման, համակարգային մոտեցման, հետազոտական մեթոդներով:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԷՊԻԿԱԿԱՆ ԵՎ ՔՆԱՐԱԿԱՆ ՉԱՓԱԾՈ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

§1.1 ԷՊԻԿԱԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրտսեր դպրոցում «Մայրենի» դասագրքերում ավանդվող չափածո ստեղծագործությունները ըստ քնարական սեռի առանձնահատկությունների լինում են էպիկական և քնարական (լիրիկական):

Այն չափածո երկերը, որոնցում պատմվում է որեւէ դեպք, իրադարձություն, ունեն որոշակի սյուժե, գործող անձինք, այդ անձանց միջև կան փոխհարաբերություններ այնպես, ինչպես պատմվածքներում, հեքիաթներում, կոչվում են *էպիկական չափածո* ստեղծագործություններ: Այսպիսին են, օրինակ, երկրորդ դասարանի «Մայրենի» դասագրքում ընդգրկված Լևոն Միրիջանյանի «Զրույց հեռախոսով», Լիպարիտ Սարգսյանի «Տղան և մրջյունը», Նանսեն Միքայելյանի «Ո՞ւմ ծառն է», Միլվա Կապուտիկյանի «Ավոյի ծիլը», Էդ. Միլիտոնյանի «Ոզնին», «Մայրենի» IV դասարանի դասագրքում ավանդվող «Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ», Ավ. Իսահակյանի «Արջն ու օձը», Աթաբեկ Խնկոյանի «Ճպուռն ու մրջյունը» և այլ բանաստեղծություններ: Սրանք և՛ կառուցվածքով, և՛ բովանդակությամբ մոտ են պատմվածքին, աշակերտները հեշտությամբ կարող են վերապատմել դիպաշարը:

Չափածո խոսքի ընկալումը կրտսեր դպրոցականի համար դյուրին չէ, հետևաբար ուսուցիչը պետք է հանձնարարի նյութի կրկնակի ընթերցում, որը կարող է զուգակցվել դեպքերի և նկարագրությունների մեկնաբանությամբ: Արդյունավետ է նաև ստեղծագործության ընթերցումը դերերով կամ միմյանց շարունակելով:

Մանկավարժ Ջ. Գյուլամիրյանը, խորհուրդ տալով իրականացնել բացատրական ընթերցանություն իր բոլոր բաղադրամասերով, նկատում է. «Էպիկական բանաստեղծությունները սովորաբար կարող են բաժանել

տրամաբանական ամբողջություն ներկայացնող հատվածների, վերնագրել դրանք, ներկայացնել «բառային նկարագրությամբ», վերարտադրել բովանդակությունը, գտնել էջի նկարագրությանը համապատասխանող տողերը և այլն»[1]:

Օրինակ՝ Աթաբեկ Խնկոյանի «Ճպուռն ու մրջյունը» բանաստեղծության ուսուցման ժամանակ ուսուցչի օգնությամբ աշակերտները երկը կարող են բաժանել հատվածների՝ վերնագրելով դրանք: Այսպես՝ «Անհոգ ճպուռի ամառային օրերը», «Ձմռան անակնկալը՝ ճպուռին», «Ճպուռի խնդրանքը մրջյունին», «Մրջյունի տված դասը»: Ապա կարելի է կատարել բառային նկարագրություն:

Ուսուցիչ.- Երեխանե՛ր, եկե՛ք բառերով բնութագրենք ճպուռին ամռանը:

Աշակերտ.-Թռի-վռի, անհոգ, ուրախ, երգասեր, ճռռացող:

Ուսուցիչ.-Այժմ բառային բնութագրման ենթարկենք ցուրտ ձմեռը:

Աշակերտ.-Սպիտակ, փափուկ, մռայլ անարև, ցուրտ, ցրտաշունչ, սառչող դողացնող:

Ուսուցիչ.- Բնութագրենք մրջյունի տուն խնդրանքով գնացած ճպուռին:

Աշակերտ.-Հուսահատ, սոված, սառած, մրսած, խեղճ, ապրել ուզող:

Ուսուցիչ.-Բառային բնութագրման ենթարկենք մրջյունին:

Աշակերտ.- Զարմացած, աշխատասեր, ապահովված:

Այս բանաստեղծության էջը ունի նկարագրություն. «Աշխատասեր մարդկանց հաճախ համեմատում են մեղուների և մրջյունների հետ: Միասնական աշխատենք, միասին վայելենք, հաշտ ու խաղաղ ապրենք» [2]: Ուսուցիչը պահանջում է, որ աշակերտները գտնեն բանաստեղծության մեջ վերը նշված նկարագրությանը համապատասխանող տողերը: Աշակերտները կարդում են.

«Չաշխատեցիր ամառը,
Ասա՝ ի՞նչն էր պատճառը»:

Ջ. Գյուլամիրյանը խորհուրդ է տալիս էպիկական բանաստեղծությունների ուսուցմը զուգակցել տարաբնույթ զննական միջոցների հետ: Այս բանաստեղծության հիման վրա նկարահանված է մուլտֆիլմ: Աշակերտները կարող են դիտել այն:

Լավագույն տարբերակներից է նաև բեմականացումը. այն կարելի է կազմակերպել՝ աշխատանքի մեջ ընդգրկելով երեքից չորս աշակերտ: Բեմի կահավորմանը կարող են մասնակցել սովորողները: Վերջիններս իրենց գունանկարներով, ապլիկացիոն աշխատանքներով, սեփական ջանքերով ձևավորած հագուստներով կարող են ամբողջացնել բեմականացումը:

§1.2 ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քնարական բանաստեղծություններում բացակայում են գործող հերոսները: Այդ երկերը չունեն սյուժետային գծեր, սակայն գեղագիտական դաստիարակության առումով ունեն մեծ նշանակություն: Այս երկերի ուսուցումը խթանում է նաև գրական խոսքի զարգացմանը և չափածո ստեղծագործությունների առանձնահատկությունների ճիշտ ընկալմանը:

Քնարական բանաստեղծությունները կարող են լինել խոհական (Ռազմիկ Դավոյանի «Իմ այս գիրքը», Վռամ Հովսեփյանի «Գիրք» [3], Հովհաննես Շիրազի «Հայոց լեզուն», Լիպարիտ Սարգսյանի «Հայոց ուսուցիչ» [4], փիլիսոփայական՝ Մետաքսեի «Նոր տարվա գիշեր», Հրաչիկ Սևոյանի «Տակառի լողը» բանաստեղծությունները» [2], խրատական (տե՛ս Հովհաննես Շիրազի «Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց», Ռաֆայել Հայրապետյանի «Շախմատ» բանաստեղծությունները [5]: Այս չափածո ստեղծագործություններն ունեն սովորողների ներաշխարհը հարստացնող, խոսքը զարգացնող, գեղագիտական ճաշակը բարձրացնող նշանակություններ:

Կրտսեր դպրոցականները նախ՝ պետք է աստիճանաբար փորձեն հասկանալ բանաստեղծության լեզուն, ընկալել շարահյուսական կառույցների առանձնահատկությունները, բանաստեղծության կառուցվածքային յուրահատկությունները: Ուսուցիչը պետք է բացատրի, որ բանաստեղծական մեկ

տողը կարող է համընկնել սովորական նախադասությանը, սակայն միշտ չէ, որ այդպես է: Օրինակ՝

Մեր հույսի դուռն է մայրս,
Մեր տան մատուռն է մայրս,
Մեր օրորոցն է մայրս,
Մեր տան ամրոցն է մայրս:

(Հովհ. Շիրազ, Մայրս)

Այստեղ բանաստեղծական մեկ տողը համընկել է շարահյուսական մեկ միավորի (ամեն տողը մեկ նախադասություն է):

Ինձ վեր հանեց
Հայրս իր հզոր ձեռքերով…

(Խաչիկ Մանուկյան, Հայրս)

Այս օրինակում բանաստեղծական մեկ տողը՝ որպես ռիթմական մեկ միավոր, չի համընկել շարահյուսական միավորին, այն կիսված է ռիթմական երկու միավորների միջև:

Քնարական բանաստեղծությունների ուսուցմանը կարող են նպաստել էքսկուրսիաները: Օրինակ՝ Համո Սահյանի «Գարուն է գալիս» բանաստեղծության ուսուցման ժամանակ կարելի է էքսկուրսիա կազմակերպել գարնանային այգում կամ պարտեզում՝ ցույց տալով նորածիլ բնությունը, նահանջող ձյունը, ծաղկունքով զարդարված հողը, զգալ բույրերով լցված օդը: Կամ Հովհաննես Թումանյանի « Աշուն» բանաստեղծության ուսուցումը արդյունավետ կարող է լինել աշնանային բնության գրկում՝ դեղնած դաշտեր, նախշուն ծառեր, սառը քամի, օդում օրորվող դեղին տերևներ, տխուր մարդիկ: Ուսուցիչը կարող է նաև զրույցի միջոցով ընկալելի դարձնել քնարական բանաստեղծության բովանդակությունը: Օրինակ՝ Պատվական Խաչատրյանի «Աշուն տատիկը» բանաստեղծության ուսուցումը լավագույն հնարավորությունը կստեղծի զրույց ծավալելու համար: Այսպես՝ Աշուն տատիկը

բարության խորհրդանիշն է: Նա նույնքան առատաձեռն է, որքան մեր յուրաքանչյուրի տատիկը: Նա մեր կերակուր պատրաստողն է, հյութը՝ բաժանողը: Աշուն տատիկը անմնացորդ նվիրվում է բոլորին ամեն ինչ՝ իրեն չթողնելով ոչինչ: Նա անձնազոհ է, սիրառատ: Ուսուցիչը կարող է աշակերտներին առաջարկել պատմել իրենց տատիկների մասին՝ համեմատելով նրանց Աշուն տատիկի հետ:

Երաժշտական և գրական ունկնդրումները ևս կարող են հեշտացնել քնարական բանաստեղծության յուրացումը: Մանկական երգարաններում քիչ չեն այն երգերը, որոնք կարող են լիցքաթափել և հաճելի դարձնել երկերի ուսուցման գործընթացը:

Կան ուսուցիչներ, ովքեր այդպիսի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ այցելում են նկարիչների ցուցահանդեսներ: Գարնան, աշնան, ձմռան կամ ամռան բնապատկերներով լի են մեր պատկերասրահները: Աշակերտները կարող են դիտել դրանք՝ փորձելով կրկնօրինակել գունային խաղը, բովանդակությունն ու տրամադրությունները:

Քնարական բանաստեղծությունների ուսուցմանը կարող է օգնել նաև հեղինակի կենսագրության հետաքրքիր դրվագների ներկայացումը:

Որքան էլ ասում ենք քնարական բանաստեղծություն, այնուամենայնիվ կրտսեր դպրոցականների «Մայրենի» դասագրքերում մաքուր քնարական բանաստեղծությունները սակավ են հանդիպում: Ավելի հաճախ դրանք լիրոէպիկական բանաստեղծություններ են: Ուստի վերը կատարված բաժանումը (քնարական և էպիկական), օրինակ, Աշոտ Տեր-Գրիգորյանը համարում է պայմանական: Այսպես՝ բնության նկարագրությամբ բանաստեղծությունների մեջ ներթափանցած են լինում բանաստեղծի խոհը, կենսափիլիսոփայությունը: Հովհ. Թումանյանի «Տերևաթափ», Ղազարոս Աղայանի «Ամիսներ և չորս եղանակ» բանաստեղծությունները դրա վառ օրինակն են:

Հովհ. Թումանյանը ոչ միայն նկարագրում է աշնան հեքիաթային տերևաթափը, ոսկի, դեղին, վառ ծիրանի գույների խաղը, այլև հիշեցնում, որ հասուն բնությունը պատրաստվում է ձմռանը, որին հետո հաջորդելու է վերածնունդը:

Ղ. Աղայանի «Ամիսներ և չորս եղանակ» բանաստեղծությունը ունի ճանաչողական և ուսուցողական մեծ նշանակություններ: Երեխաները կարող են սովորել ամիսների հերթականությունը, իմանալ նրանց առանձնահատկությունները: Անթաքույց է նաև հեղինակի վերաբերմունքը հատկապես գարնան և ամռան ամիսների նկատմամբ:

Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլը՝ կապույտ մանուշակ
Մայիսին բացվում է վարդը,
Սոխակը երգում անուշակ:

Այսպիսով, քնարական և էպիկական բանաստեղծությունների ուսուցումը բարդ, բայց միևնույն ժամանակ հետաքրքիր է: Բնագրերի գեղեցիկ, սահուն, արտահայտիչ, հուզական ընթերցանությունը, որի օրինակը կարող է տալ ուսուցիչը, կարևոր է և պարտադիր: Այն կհարստացնի սովորողների հուզաշխարհը, կզարգացնի արտաքին աշխարհի զգայական ընկալումը, կսովորեցնի խոսքի միջոցով ազդել ունկնդիրների վրա:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՉԱՓԱԾՈ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մայրենի լեզվի ուսուցման ընթացքում ուսուցչի նպատակը պետք է լինի ոչ միայն աշակերտների վարժ կարդալը, բովանդակությունը վերարտադրելու կարողության զարգացումը, այլև գեղագիտական ճաշակի, գեղեցիկ, հստակ խոսքի ձևավորումը: Աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար կան բազմաթիվ մեթոդներ: Ուսուցման ավանդական և ժամանակակից (ինտերակտիվ) մեթոդների հարուստ զինանոցը ուսուցչին հնարավորություն կտա ուսուցումը դարձնել հետաքրքիր և բազմազան: Հատկապես ինտերակտիվ ուսուցումը թույլ կտա բոլոր սովորողներին ընդգրկվել ուսուցման գործընթացի մեջ, հասկանալ և ներկայացնել հասկացածը:

Համատեղ աշխատանքը, որը արդյունավետ դասի կարևոր նախապայմաններից է, ապացույցն է այն բանի, որ յուրաքանչյուն իր անհատական մասնակցությունն ունի մտքերի և գիտելիքների փոխանակման ընթացքում: Սա տեղի է ունենում բարյացակամ, փոխօգնության մթնոլորտում, որը թույլ է տալիս նոր գիտելիքներ ստանալ, զարգացնել իմացական գործունեությունը՝ այն բերելով ավելի բարձր մակարդակի՝ համագործակցային ձևի:

Չափածո ստեղծագործությունների ուսուցումը ենթադրում է երկխոսության միջոցով կազմակերպում և զարգացում, որը նպաստում է փոխկապվածությամբ և փոխներգործությամբ յուրաքանչյուրի համար անհատապես կարևոր խնդիրների լուծում:

§2.1 ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՉԱՓԱԾՈ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հատկապես էպիկական չափածո ստեղծագործությունների ուսուցման ժամանակ արդյունավետ է *իրավիճակների վերլուծության մեթոդի* կիրառումը:

Ուսուցիչը աշակերտներին ներկայացնում է իրավիճակ, օրինակ՝ Խնկո-Ապոր «Ճպուռն ու մրջյունը» բանաստեղծության մեջ ներկայացված իրավիճակը: Անհրաժեշտ է աշխատանք տանել:

1. Օգնել գնահատել ներկայացված իրավիճակը, վերլուծել այն.
2. Առաջարկել խնդրի լուծման տարբերակներ.
3. Խնդրի լուծման համար ձեռնարկված գործողությունների և դրանց հետևանքների գնահատում:

Ընտրելով տարբերակը (ողջ ամառը դեսուդեն թռչկոտող ճպուռը ձմռան շեմին մնում է անտուն և սոված)՝ անմիջապես որոշվում է իրավիճակի վերլուծության մեթոդի խնդրի ներառման շրջանակը: Եթե խնդիրը բարդ չէ (իսկ այս բանաստեղծության մեջ ներկայացված խնդիրը պարզ է), ապա վարժանքի ձևը կլինի կարճատև (կամ հանգամանալից, եթե կա ժամանակ):

Ուսուցումն իրականացվում է խնդրի ձևով՝ ինֆորմացիայի ներկայացմամբ: Այն կարելի է ներկայացնել խոսքային կամ տեսողական միջոցներով: Այսպես՝ արտասանել կամ կարդալ բանաստեղծությունը՝ հատուկ ընդգծելով արծարծվող խնդրին վերաբերող հատվածները.

Թռի-վռի մի ճպուռ,
Ողջ ամառը շուռումուռ,
Երգեց, ճռռաց,
Ճռճռաց:
Մին էլ, ըհը՜, ձմեռը
Փռեց իր ցուրտ թևերը…
…Քաղցած փորին էլ ի՞նչ երգ,
Ցուրտը տարավ ոտ ու ձեռք…

Կարելի աշակերտներին ցուցադրել մուլտֆիլմը:

Երբ սովորողների խումբը ստանում է տվյալները, սկսում է դրանց մանրամասն վերլուծության գործընթացը:

Ուսուցչի վերահսկողությամբ և նախապես ձևակերպված հարցերի միջոցով մրցակցության սկզբունքով վերլուծվում են իրավիճակները:

1. Ինչո՞ւ ամռանը թռի-վռի անող ճպուռը չէր մտածում մոտալուտ ձմռան մասին:
2. Ճպուռի պատճառաբանություններն արդարացնո՞ւմ են իրեն:
3. Ինչո՞ւ մրջյունը չօգնեց մրջյունին:
4. Ճի՞շտ վարվեց մրջյունը:

Ընթացքում ուսուցիչը կարող է երկարացնել կամ կարճացնել քննարկման ժամանակը, կարող է սահմանափակումներ անել, օրինակ՝ չպետք է օգտվել լրացուցիչ ինֆորմացիայից և այլն:

Իրավիճակների քննարկամն մեթոդի կիրառումը կարող է արդյունավետ, գործնական լրացում լինել տեսական նյութի համար: Երեխաները սեփական քննարկումներով կարող են գնահատել ճպուռի և մրջյունի վարքը: Այս մեթոդը լավ հնարավորություն է տալիս ուսումնասիրել հուզական նշանակություն ունեցող հարցերը:

Չափածո ստեղծագործությունների արդյունավետ ուսուցման մեթոդներից է նաև *մտքերի տարափը*:

Մտքերի տարափի գլխավոր հատկանիշը մտքերի գեներացումն է: Մեթոդի ճիշտ և նպատակային կիրառումը: Այն

1. Կարող է առաջացնել լավագույն մտքերը աշակերտների մեջ.
2. Խումբը, գտնվելով մտքերի գեներացիայի վիճակում, ունենում է ստեղծագործական մտածողություն, որն այդ պահին գերակշռում է, և այն արգելակել հնարավոր չէ:

Ստեղծագործական մտածողությունն անցնում է երեք փուլ՝

1. Մտքերի գեներացիա.
2. Այդ մտքերի վերլուծություն և գնահատում.
3. Գաղափարի կամ մտքի կիրառում ընտրված իրավիճակում:

Օրինակ՝ Հրաչիկ Սևոյանի «Տակառի լողը» (Մայրենի-4, Մաս 2, էջ 94) բանաստեղծության ուսուցումը մտքերի տարափի մեթոդով դասավանդելիս նախ պետք է գեներացնել մտքեր:

Դատարկ տակառը, որը հսկա գետի հոսանքն ի վար քշվում էր, մեծամիտ է: Նրա խոսքերը դատարկ պարծենկոտության ապացույց են:

-Ճամփա՛ տվե՛ք, ե՛ս եմ գալիս՝
Իմ մեծ լողով հաղթ ու անշեղ,
Նավերն իմ դեմ ի՞նչ են, տաշեղ…

Աշակերտները սկսում են վերլուծել և գնահատել տակառի մտքերը: Որքան որ դատարկ է տակառը, նույնքան դատարկամիտ ու պարծենկոտ է: Նա անգամ նավերին է ծաղրում, որոնք ոչ միայն ծանրաբեռնված են, այլև կարևոր գործեր են անում:

Իսկ բանաստեղծության հաջորդ մասում տակառին ընդառաջ եկող նավի խոսքերը ունեն դաստիարակչական արժեք.

-Ո՛վ բթամիտ, դատարկ տակառ,
Կյանքը գործ է և ոչ թե ճառ,
Դու որպեսզի ապացուցես,
Որ իսկապես լողալ գիտես
Եվ հզոր ես, մեծ ուժի տեր,
Պիտի լողաս հոսանքն ի վեր…

Աշակերտները կրկին մտքերի տարափով քննարկում են նավի խոսքերը: Հեշտ է լողալ հոսանքին հավասար, բայց դժվար է, երբ լողում ես հոսանքն ի վեր: Դա տակառն անել չէր կարող, որովհետև ոչ միայն դատարկ էր, այլև մեծամիտ ու դատարկախոս:

Մտքերի տարափից հետո անհրաժեշտ է դրանք կիրառել ընտրված իրավիճակում: Ուսուցիչը հարցնում է, թե նմանատիպ ի՞նչ իրավիճակներ կարող են հիշել:

Եթե յուրաքանչյուր առաջացող միտք անմիջապես բախվում է գնահատող դատողության, ապա առաջացնում է այսպես կոչված «վերլուծական կաթված», որը

բերում է առաջարկությունների հոսքի կտրուկ նվազման: Ստեղծագործական մտածողությունը կարող է զարգանալ կամ գործել միայն այն դեպքում, երբ գնահատական տալ թույլատրվում է միայն մտքերի, լուծումներ առաջարկելու ընթացքի ավարտից հետո:

Մտքերի տարափից հետո պետք է հաշվի առնել հետևյալ քայլերը.

1. Ցանկացած քննադատության բացակայություն: Մտքերի ազատ հոսք կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ բացակայում է քննադատությունը: Քննադատություն ասելով՝ պետք է նկատի ունենալ թե՛ բացահայտ բացասական գնահատականը, թե՛ ոչ բացահայտ քմծիծաղը, թե՛ չափից դուրս հովանավորելը:
2. Շեշտադրումը պետք է արվի արտահայտվող մտքերի քանակի, ոչ թե որակի վրա: Պետք է խրախուսել շատ մտքեր արտահայտելը, իսկ վերջում՝ քննարկման ժամանակ, ցանկացած մտքի վերաբերյալ տեսակետներ արտահայտելու հնարավորություն ստեղծել:
3. Յուրաքանչյուր մասնակից պետք է զգա, որ իր կողմից ասված միտքը արժանի է ուշադրության, այդ ժամանակ բոլորը խթան կունենան մտքեր արտահայտելու համար: Եթե ուսուցիչը նկատի՝ աշակերտի մոտ նոր մտքեր չեն ծագում, պետք է իր մեկնաբանություններով և լրացումներով ակտիվացնի խմբին:

Որքան էլ այս մեթոդը հեշտ կիրառելի է, չի պահանջում երկարատև նախապատրաստություն, այնուամենայնիվ մտքերի տարափը ենթադրում է խմբի բոլոր անդամների ներգրավվածություն, որը և՛ առավելություն է, և՛ թերություն: Թերությունն այն է, որ պատասխանատվությունն ընկնում է մասնակիցների վրա: Մեթոդն արդյունավետ է, եթե մասնակիցներն ասելիք ունեն, իսկ էպիկական չափածո ստեղծագործությունների ուսուցման ժամանակ խումբն, անշուշտ, շատ մտքեր կարող է ձևակերպել:

Չափածո ստեղծագործությունների ուսուցման արդյունավետությունը կարող են բարձրացնել նաև *խմբային աշխատանքները*:

Ուսուցման համագործակցային սկզբունքները տևականորեն հիմնավորված և գործնականում ստուգված փաստերի ամբողջություն են: Խմբային աշխատանքը ունի հետևյալ սկզբունքները.

1. Դրական փոխկախվածություն.
2. Ուսուցման արդյունքների անհատական գնահատում.
3. Աշակերտների անմիջական փոխազդեցություն.
4. Խմբային աշխատանքի հմտությունների, համագործակցային վարքուկանոնի և դրանց պարտադիր կիրառմանը նպատակաուղղված ուսուցում:

Այսպիսով, չափածո ստեղծագործությունների ուսուցման համար կան բազմաթիվ մեթոդներ, որոնցից օգտվելու լայն հնարավորություն ունի ուսուցիչը: Կարևորը աշխատանքի նկատմամբ ցուցաբերած հետևողականությունն է և նվիրումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, չափածո ստեղծագործությունների ուսուցումը կրտսեր դպրոցում ունի կարևոր նշանակություն: Հաշվի առնելով դա՝ մենք եկանք հետևյալ եզրակացության՝

1. Չափածո ստեղծագործություններն ունեն կրթադաստիարակչական մեծ նշանակություն:
2. Չափածո երկերը զարգացնում են սովորողների աշխարհայացքը, խոսքը, երևակայությունը, ձևավորում նրանց արժեքային համակարգը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջուլիետա, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երկրորդ լրամշակված հրատարակություն, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2009, էջ 170:
2. Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Սարգսյան Վ., Չիբուխչյան Կ., Մայրենի-4, Դասագիրք չորրորդ դասարանի համար, Երևան, 2022, էջ 89:
3. Սարգսյան Վ., Գրիգորյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Մայրենի-2, Դասագիրք երկրորդ դասարանի համար, Երևան, 2010:
4. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի-4, Եր., 2020:
5. Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Թորոսյան Կ., Ջիլավյան Ե., Մայրենի-3, Դասագիրք երրորդ դասարանի համար, Երևան, 2021: